

**Արձանագրություն № 7 (298)**  
**ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի**  
**2017 թ-ի ապրիլի 20-ի նիստի**

Գիտխորհրդի նիստը նախագահում էր ֆակուլտետի դեկան դոցենտ Պ.Բալայանը:  
Ֆակուլտետի գիտխորհրդի նիստին ներկա են 28 անդամներից 22-ը: Ապահովված է անհրաժեշտ քվորումը:

**Օրակարգ.**

1. Պետական քննությունների անցկացման և ավարտական և մագիստրոսական աշխատանքների պաշտպանության նախապատրաստվելու մասին:
2. Հաղորդում մագիստրոսական աշխատանքների "Հակագրագողություն" ծրագրով ստուգման արդյունքների մասին:
3. Հաղորդում բակալավրի ծրագրում փոփոխությունների մասին:
4. Ռուս բանասիրության ֆակուլտետի հեռակա ուսուցմամբ ասպիրանտի և հայցորդի թեմաների վերնագրերը վերաձևակերպման հարցը:
5. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ` Պետական քննությունների անցկացման և ավարտական, մագիստրոսական աշխատանքների պաշտպանության նախապատրաստվելու մասին:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ` դեկան Պ.Բալայանը տեղեկացրեց մագիստրոսական աշխատանքների գնահատման կարգում տեղ գտած փոփոխությունների մասին, նրանք ուղարկվել են ամբիոններ: Հարկավոր է այդ մասին տեղյակ պահել քննական հանձնաժողովի /հրավիրված/ անդամներին:

ՈՐՈՇԵՑԻՆ` Հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ` Հաղորդում մագիստրոսական աշխատանքների "Հակագրագողություն" ծրագրով ստուգման արդյունքների մասին:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ` դեկան Պ.Բալայանը: Ստուգման արդյունքների մասին ամբողջական հաշվետվությունը ուղարկվել է ամբիոնների և ուսանողների էլ. փոստին: Ֆակուլտետի մագիստրոսի ծրագրով սովորող 10 ուսանողներից 8-ի աշխատանքները հաջողությամբ անցել են ստուգումը, ցուցաբերելով եզակիության 61-86 %: Երկուսի մոտ այն կազմել է 10 % և 23%:

Հիշեցում. պաշտպանությունից 1 օր առաջ աշխատանքները և կարծիքները պետք է հանձնվեն ամբիոններ:

ՈՐՈՇԵՑԻՆ` Հաղորդումն ընդունել ի գիտություն:

**3. ԼՍԵՑԻՆ` Հաղորդում բակալավրի ծրագրում փոփոխությունների մասին:**

Ֆակուլտետի դեկան Պ.Բալայանը ներկայացրեց բակալավրի ծրագրում սպասվող փոփոխությունները: Առաջարկվում է հանել ավարտական քննությունը, թողնելով միայն ավարտական աշխատանքի պաշտպանություն: Համարում ենք, որ ավարտական աշխատանքը չի կարող ուսանողի գիտելիքների ամբողջական պատկերը արտահայտել: Ներդրվում է արտադրական պրակտիկա հասկացությունը. մենք առաջարկում ենք մեր ուսանողներին այն անցնել ամբիոններում: Կրճատվում է ռուսաց լեզու դասընթացի ժամերը. 2 կիսամյակ, շաբաթական 4 ժամ, ապահովելով B-2 մակարդակ: Հեռակա ուսուցման տևողությունը բոլոր մասնագիտություններով լինելու է 4 շաբաթ 1 կիսամյակում: մեկ շաբաթով կրճատվում է /յուրաքանչյուր կիսամյակում/ ուսման տևողությունը: Ունենալու ենք դժվարություններ ծանրաբեռնվածության հետ: Մինչև ապրիլի 25 պետք է ներկայացնել մեր առաջարկներ:

**ՈՐՈՇԵՑԻՆ`** Հաղորդումն ընդունել ի գիտություն:

**4. ԼՍԵՑԻՆ` ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Մ.Արշակյանի և հայցորդ Վ.Ադամյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագրի վերաձևակերպման հարցը:**

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ`** պրոֆ. Լ.Բրուտյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ`** 1. Հաստատել ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի հայցորդ Վերա Արթուրի Ադամյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ վերնագրով՝ "Речевой акт просьбы в русской лингвокультуре" - "Խնդրանքի խոսողական ակտը ռուսական լեզվամշակույթում", որը համապատասխանում է Ժ. 02.04 - "Սլավոնական լեզուներ (ռուսաց լեզու)" մասնագիտությանը:

2. Հաստատել ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի հեռակա ասպիրանտ ("ռուսաց լեզու" մասնագիտությամբ) Մարիամ Գեղամի Արշակյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ վերնագրով՝ Речевой акт комплимента в русской лингвокультуре) – “Հաճոյախոսության խոսողական ակտը ռուսական լեզվամշակույթում”, որը համապատասխանում է Ժ. 02.04 - "Սլավոնական լեզուներ (ռուսաց լեզու)" մասնագիտությանը:

**5. ԼՍԵՑԻՆ` Ընթացիկ հարցեր:**

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ`**

1. Ֆակուլտետի դեկան Պ.Բալայանը: “Ռուսաց լեզու արտասահմանցիների համար” C 1 մակարդակի հավաստագիր ստանալու համար քննություն հանձնող դասախոսների ցուցակը ուղարկվել է ամբիոններ:

2. Ֆակուլտետի դեկանի տեղակալ Դ.Գազարովան հորդորեց քննական աշխատանքները ստուգելիս դրսևորել հետևողականություն, մեկնաբանել գնահատականը և չափազանց ուշադիր լինել ամփոփագրերը և ստուգարքային գրքույքները լրացնելիս:

3. Դոցենտ Ս.Լալայանը տեղեկացրեց ռուսաց լեզվի օլիմպիադայի 3-րդ փուլի անցկացման մասին, խնդրելով ապահովել մեծ լսարաններով, 350-400 ուսանողների համար:

4. Պ.Բալայանը հանձնարարեց խորհրդի անդամ - ուսանողներին ուսանողական խորհրդի հետ քննարկել և հաջորդ նիստին ելութ գալ իրենց հուզող հարցերով:

Գիտական խորհրդի նախագահ՝

Պ.Բ. ԲԱԼԱՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ.Ռ. ԴՊԻՐՅԱՆ